Հաստատվում եմ
Տնօրեն Լ. Միքայելյան

Digitally signed by MIKAYELYAN LUSINE
6503740131
Date: 2023.10.19 13:14:13 AMT

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.2 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԱՐԱՆ 7ա

ԴԱՍՂԵԿ Հասմիկ Մարգարյան

ՈՒՍՏԱՐԻ 2023-2024

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Աշակերտների մոտ դաստիարակել սեր և գիտակցական վերաբերմունք ուսման նկատմամբ, ամրապնդել կարգապահությունը, բարձրացնել պատասխանատվության զգացումը: Հասնել նրան որ ուշացումներ ուանհարգելի բացակայություններ չլինեն: Ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը դասարանական աշխատանքներին: Օգնել հետ մնացող աշակերտներին: Կազմակերպել ուսումնադաստիրակչական էքսկուրսիաներ, գրական ընթերցումներ:

2.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1 Հոգևոր դաստարակություն

Կարևորել կրոնի դերն ու նշանակությունը, եկեղեցու կարևորությունը համախմբման գործընթացում: Անցկացնել զրույցներ Աստվածաշնչյան թեմաներով: Պահպանել հոգևոր բարեպաշտական սովորույթներն ու ավանդույթները, ծիսական արարողակարգերը:

2.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ըմբռնելու հմտությունը: Անցկացնել զրույցներ «Գեղեցկությունը բարոյականություն է» թեմայով, որը աշակերտների մեջ սեր կարթնացնի դեպի գեղեցիկը և կբարձրացնի նրանց գեղագիտական ճաշակը:

2.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտներին սովորեցնել սիրել և պահպանել հայրենիքը, անաղարտ պահել մայրենի լեզուն: Պատմել Մեր հայրենիքի մասին, մեր հերոսների կատարած գործերի մասին : Սերմանել սեր ու հարգանք հայրենիք համար զոհված հերոսներին հիշելու, մեծարելու վեհ գաղափարներ: Հաճախ լսել հայրենասիրական երգեր:

2.4 **Ֆիզիկական դաստիարակություն**

Աշակերտների մոտ ձևավորել առողջ ապրելու կուլտուրան :Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասաժամերին: Անցկացնել զրույցներ:

2.5 **Աշխատանքային դաստիարակություն**

Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն– այս խոսքերով պետք է սեր արթնացնել դեպի աշխատանքը: Կարևորել աշխատելու կարողությունը և ամրապնդել սերը աշխատանքի հանդեպ:

2.6 **Բնապահպանական դաստիարակություն**

Պահպանել և գնահատել շրջակա միջավայրը: Աճեցնել ծաղիկներ և խնամել դրանք, մաքուր պահել շրջակա միջավայրը: Դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ: Անցկացնել զրույցներ բնության նշանակությունը և նրա գեղեցկությունը թեմաներով:

2. Դպրոց-ընտանիք կապը

Ընտրել ծնողական կոմիտե: Ամրապնդել դպրոց-ուսուցիչ-ծնող կապը: Անցկացնել ծնողական ժողովներ: Կապ պահպանել հետ մնացող աշակերտների ծնողների հետ: Ծնողներին հաղորդակից դարձնել դպրոցական միջոցառումներին :

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Անցկացման օրը	*Դասղեկի անցկացրած միջոցառման /դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսաներ և այլն/ բովանդակություն*
սեպտեմբեր	*1. Պատմական ակնարկ Հայաստանի մասին:*
սեպտեմբեր	*2. Հայկական ավանդույթները, որոնցով հպարտանում ենք:*
սեպտեմբեր	*3. Հայկական ավանդույթները, որոնցով հպարտանում ենք:*
սեպտեմբեր	*4. Հայկական ավանդույթները, որոնցով հպարտանում ենք:*
հոկտեմբեր	*5. Ընտանիք և պարտականություն:*
հոկտեմբեր	*6. Բարոյականություն և իրավունք:*
հոկտեմբեր	*7. Բարոյականություն և իրավունք:*
նոյեմբեր	*8. Իմ իրավունքները:*
նոյեմբեր	*9. Ով է պատասխանատու իմիրավունքների համար:*
նոյեմբեր	*10.Ուզում եմ ունենալ պետություն, որտեղ…*
նոյեմբեր	*11.Իմ հայրենիքի պատմության էջերը:*
դեկտեմբեր	*12.Քաղաքացիություն:*
դեկտեմբեր	*13.Արդար, ազնիվ և օրինապահ:*
դեկտեմբեր	*14.Երբ աշխատանքը միայն ուրախություն է:*
դեկտեմբեր	*15.Ում եմ համարում գեղեցիկ մարդ:*
հունվար	*16.Հայտնի հայ մարզիկները:*
հունվար	*17.Ուժեղ լինել,նշանակում է…*

հունվար	*18.Ում կուզեի նմանվել:*
փետրվար	*19.Ինչպես հասկանալ մարդկանց:*
փետրվար	*20.Ինչպես պահպանել Երկիր մոլորակը:*
փետրվար	*21 .Պահպանենք մեր շրջակա միջավայրը:*
փետրվար	*22.Պատերազմ տեսած մանուկները:*
մարտ	*23.Արցախյան պատերազմի հետևանքները:*
մարտ	*24.Անհատի բարեկրթությունը:*
մարտ	*25.Ինչ գեղեցիկ է աշխարհը:*
մարտ	*26.Եթե ես կարողանայի…*
ապրիլ	*27.Ինչ է ընկերությունը և բարեկամությունը:*
ապրիլ	*28.Իմ լավագույն ընկերը:*
ապրիլ	*29.Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները:*
ապրիլ	*30.Ում եմ ես վստահում:*
մայիս	*31.Իմ կարդացած գրքի որ հերոսն է տպավորվել իմ մեջ:*
մայիս	*32.Հետաքրքրությունը լավ հատկանիշ է թե վատ:*
մայիս	*33.Ինչ է ինձ համար դպրոցը:*
մայիս	*34. Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին:*

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ *Մովսես Մաթոսյան*

անդամներ՝ 1.Վիկա Գևորգյան

2.Նունե Փերիխանյան

3.Ալվարդ Պետրոսյան

4.Անուշ Դավթյան

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Զրույցի համառոտ բովանդակությունը
2023թ. սեպտեմբեր	1.Ծանոթություն	
	2. Ծնողական կոմիտեի և նախագահի ընտրություն	Ընտրեցինք ծնող կոմիտե և նախագահ
	3. Գրքերի վարձավճարների հավաքագրում	Որոշվեց մինչև հոկտեմբերի վերջը հավաքագրել ամբողջ գումարը:
	4.Պատճենահանման և թղթի ձեռքբերման վերբերյալ հարցեր քննարկում	Որոշվեց ձեռքբերել A4թուղթ, հավաքել գումար պատենահանման համար:
	5.Քննարկել «Անձնական տվյալների մշակման ծանուցումը»	Ստացանք համաձայնություն ծնողների կողմից օգտագործել իրանց երեխաների անձնական տվյալները:
	6. Կարգապահական հարցեր	
	7. Ընթացիկ հարցեր	